

Ընտանեկան աղոթքի, ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրության և ընտանեկան տնային երեկոյի օրհնությունները

Երբ կարդաք Եկեղեցու ղեկավարների հետևյալ ուսմունքները, ընդգծեք օրհնությունները, որոնք գալիս են ամենօրյա ընտանեկան աղոթքից և սուրբ գրությունների ուսումնասիրությունից և ամենշաբաթյա ընտանեկան տնային երեկոյից:



Տասներկու Առաքյալների Քվիրումից Երեց Ռիչարդ Գ. Աքոթն ուսուցանել է.

«Մտղներ, օգնեք ապահովել ձեր երեխաներին՝ նրանց զինելով առավոտյան և երեկոյան ընտանեկան աղոթքի գործությամբ: . . . Պաշտպանեք ձեր երեխաներին ամենօրյա աշխարհիկ ազդեցություններից՝ ամրացնելով նրանց հզոր օրհնություններով, որոնք առաջանում են ընտանեկան աղոթքից: Ընտանեկան աղոթքը պետք է լինի անսակարկելի առաջնահերթություն ձեր ամենօրյա կյանքում:

. . . Դարձրեք [սուրբ գրությունները] ամենօրյա կյանքի անբաժան մասը: Եթե դուք ուզում եք, որ ձեր երեխաները ճանաչեն, հասկանան և գործեն Հոգու հուշումներով, դուք պետք է ուսումնասիրեք սուրբ գրությունները նրանց հետ: . . . Ամենօրյա, հետևողական սուրբ գրությունների ուսումնասիրության միջոցով, դուք կգտնեք խաղաղություն ձեզ շրջապատող խառնաշփոթության մեջ և ուժ՝ դիմադրելու գայթակղություններին: Դուք կգարգացնեք ուժեղ հավատք Աստծո ողորմածության հանդեպ և կիմանաք, որ Հիսուս Քրիստոսի Քավությամբ բոլորը ճիշտ կդարձվի համաձայն Աստծո ժամանակացույցի» («Հավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը», *Ensign* կամ *Lhahhnsa*, նոյ. 2014, 93–94):



Սփոփող Միության գերագույն նախագահությունից Քույր Լինդա Ս. Ռիվսն ասել է.

«Ես պետք է վկայեմ ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրության և աղոթքի և ամենշաբաթյա ընտանեկան տնային երեկոյի օրհնությունների վերաբերյալ: Սրանք հենց այն գործունեություններն են, որոնք օգնում են վերացնել լարվածությունը, ուղղություն տալ մեր կյանքին և պաշտպանություն ավելացնել մեր տներին» («Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն տուն» *Ensign* կամ *Lhahhnsa*, մայիս 2014, 16–17):



Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարել է.

«Ընտանեկան աղոթքը մեղքի դեմ մեծագույն կանխարգելիչն է և ուստի ամենաօգտակար ապահովող ուրախության և երջանկության» (“Hallmarks of a Happy Home,” *Ensign*, Nov. 1988, 69):

Խորհեք հետևյալ հարցերի մասին.

- Այս օրհնություններից որո՞նք եք դուք զգացել ձեր ընտանիքում կամ տեսել ուրիշ ընտանիքներում:
- Ի՞նչ կարող եք անել այժմ՝ ավելի լիարժեքորեն ստանալու այս օրհնությունները:

